Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
ապրիլի 14-ի N 537 - Ն որոշման

# Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

## ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՏԱՐԱԺԱՄԿԵՏՄԱՆ

---------- ------ ---------- 20 թ.
(կնքման վայրը)

Համայնքը (այսուհետ՝ պարտատեր) ի դեմս համայնքի ղեկավար՝

---------- ,

(պաշտոնատար անձի ազգանունը, անունը)

որը գործում է ---------- հիման վրա,
(կանոնադրության, լիազորագրի կամ այլնի)

մի կողմից, և ---------- ,
(կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը, անունը)

այսուհետ՝ «պարտապան», ի դեմս ---------- ,
(ազգանունը, անունը, պաշտոնը)

որը գործում է---------- հիման վրա,
(կանոնադրության, լիազորագրի կամ այլնի)

մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրի համաձայն պարտապանը պարտավորվում է իր նախաձեռնությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 20 թվականի որոշմամբ, նպատակային նշանակությունը փոխված հողամասերի կադաստրային արժեքների տարբերությունները վճարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի N 537 - Ն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում, իսկ պարտատերը համաձայնվում է մեկ տարով տարաժամկետել տարբերության վճարման

պարտականությունը, մեկ տարվա ընթացքում պարտապանի նախընտրած եղանակով մաս առ մաս կամ միանվագ ընդունում է համապատասխան վճարները և պարտապանին տրամադրում է վճարման պարտավորության կատարումը հավաստող ստացականը (ստացականները):

## 2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

**2.1. Պարտատերն իրավունք ունի՝**

1) պարտապանից պահանջելու վճարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված տարբերությունները.

2) սույն պայմանագրի 3.2-րդ կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում պարտապանից պահանջելու անհապաղ վճարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված տարբերությունների ամբողջ գումարը.

3) օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից:

**2.2. Պարտատերը պարտավոր է՝**

1) սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված տարբերություններն ստանալու դեպքում պարտապանին տրամադրել համապատասխան վճարումների կատարումը հավաստող ստացականը (ստացականները).

2) չխոչընդոտել սույն պայմանագրի 2.3-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված մաս առ մաս վճարելու պարտապանի իրավունքի իրականացմանը:

**2.3. Պարտապանն իրավունք ունի՝**

1) պարտատիրոջից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված տարբերությունները.

2) պարտատիրոջից պահանջելու տրամադրել համապատասխան վճարումների կատարումը հավաստող ստացականը (ստացականները).

3) սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված տարբերությունները վճարելու մաս առ մաս կամ միանվագ.

4) օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից:

**2.4. Պարտապանը պարտավոր է՝**

1) սույն պայմանագրով սահմանված կարգով վճարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված տարբերությունները.

2) վճարումները կատարել սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով:

## 3. Վճարումների կատարման կարգը

3.1. Պարտապանը սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված տարբերությունները կարող է իր հայեցողությամբ վճարել միանվագ կամ մաս առ մաս:

3.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված տարբերությունները մաս առ մաս վճարելու դեպքում վճարումները կատարվում են ամեն ամիս կամ եռամսյա կտրվածքով՝ մեկամսյա կտրվածքով վճարման ենթակա ամբողջ գումարի առնվազն տասը տոկոսի չափով, իսկ եռամսյա կտրվածքով՝ երեսուն:

## 4. Պայմանագրի գործողության ժամկետը և դրա դադարումը

4.1. Սույն պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում է -------- ---------- --------- ----- թվականից մինչև ------- ---------- ------- թվականը և ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4.2. Սույն պայմանագիրը դադարում է՝

1) պայմանագրի կատարմամբ.

2) սույն պայմանագրի 4.1-ին կետում նշված պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում.

3) կողմերի փոխադարձ համաձայնությամբ.

4) պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով պայմանագրի վաղաժամկետ լուծելու դեպքում:

## 5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

5.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից:

6.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերենով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6.3. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել կողմերի համաձայնությամբ: Սույն պայմանագրի բոլոր փոփոխություններն ու լրացումները պետք է կատարվեն գրավոր և ստորագրվեն կողմերի կողմից:

6.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցություն-ների միջոցով: Համաձայնություններ ձեռք չբերվելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

**7. Կողմերի գտնվելու վայրը և ստորագրությունները**

| **Պարտատերը** | **Պարտապանը** |
|---|---|
| ---------- | ---------- |
| *(գտնվելու վայրը)* | *(գտնվելու վայրը)* |
| ---------- | ---------- |
| *(ստորագրությունը)* | *(ստորագրությունը)* |
| *Կ.Տ.* | *Կ.Տ.* |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ